Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՄԽ

# ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1931

331·85
Պ-99

23.07.2013

331.85
Պ-99

2 FEB 2010
106

—Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

## ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

23715

Պետհրատի տպարան
Հրատարակ. 1729
Գլավլիտ 6572 (բ)
Պատվեր 3667
Տիրաժ 3000

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

59082-66

# ՀԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Պրոֆաշխատանքների վերակառուցման ընդհանուր սիստեմում կուլտ-քաղաշխատանքների վերակառուցումը շարունակվում է մնալ իբրև «նեղ տեղերից» մեկը: Ճիշտ է, վերջին շրջանում այդ ուղղությամբ զգալի առաջխաղացում նկատելի յե, բայց հարկ յեղած բեկումը դեռ չի ստեղծված. կուսակցության 16-րդ համագումարի և ՀԱՄԿԽ-ի դիրեկտիվները դեռևս մնում են թերակատար: Դեռևս մենք ականատես ենք այնպիսի դեպքերի, յերբ մեր պետական ու տնտեսական մարմինների, անգամ հասարակական կազմակերպությունների (վորոնց թվում նաև պրոֆկազմակերպությունների) առանձին ողակներն ու աշխատողները ցուցաբերում են հանցավոր անուշադրություն, յերբեմն նույնիսկ ուղղակի օպորտունիստական թերագնահատություն կուլտ-քաղաշխատանքների հանդեպ (ակումբների, կարմիր անկյունների շենքերի գրավում՝ գրասենյակների վերածելու համար, չնչին կոպեկներ կուլտ-քաղաշխատանքների համար տրամադրել և այլն):

Վոր կուլտ-քաղաշխատանքների մասսայական վերակառուցումն ու ծավալումը վճռական նշանակություն ունեն վերակառուցման շրջանում, կուսակցության կողմից առաջադրված հրատապ խնդիրների իրագործման համար, այդ մասին այսոր կասկածել կարող են միայն անուղղելի օպորտունիստները: Հաստատված փաստ է, վոր արդֆինպլանները հաջողությամբ են կատարվում հատկապես այն միավորներում, վորտեղ կուլտուրքաղաքական և պրոֆեսիոնալ աշխատանքը դրված է ամուր հիմքերի վրա և սերտորեն շաղկապված է արդֆինպլանների կատարման հետ:

Ահա թե ինչու, այսօր, երբ ամբողջ հասակով մեր առաջ դրվում է հին մեթոդներից վերջնականապես հրաժարվելու և ամենավճռական միջոցառումներով կուլտ-քաղաշխատանքի վերակառուցման գործն ավարտելու, ձեռք բերված նվաճումներն ամրապնդելու և նրանց հետագա խորացումն ապահովելու անհետաձգելի պահանջը:

Կուլտ-քաղաշխատանքների վերակառուցման կենտրոնական խնդիրը կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանի կազմությունն է, վորը նպատակ ունի համակերպելու բոլոր պետական ու տնտեսական մարմինների և հասարակական կազմակերպությունների կուլտ-քաղաշխատանքները, ուղղելով այն մեկ ընդհանուր պլանաչափ հունով: Միասնական կուլտ-քաղպլանը պետք է բխեցնել տվյալ շրջանի, գործարանի, ձեռնարկության արտֆինպլանից և յենթակա դարձնել նրան: Միասնական կուլտ-քաղպլանի անխտիր բոլոր մասերը պետք է ուղղված լինեն կուսակցության գլխավոր գծի անշեղորեն կենսագործելուն համար, ուժեղացնելով պայքարը ներկա շրջանի գլխավոր վտանգ հանդիսացող աջ օպորտունիզմի, «ձախ» խոտորումների և հաշտվողականության դեմ:

Հրատարակելով Համամիութենական ակումբային խորհրդակցության 1930 թ. ապրիլի 20-ի և 1931 թ. մարտի 15-ի կուլտ-խորհրդակցության բանաձևերն ու վորոշումները, մենք նպատակ ենք ունեցել նախ՝ վորոշ չափով ծածկել կուլտուր-քաղաքական աշխատանքներին վերաբերող հայերեն գրականության բացը և ընդհանրապես կուլտ-բանակայիններին տալ այն գլխավոր հիմունքներն ու սկզբունքները, վորոնց վրա նրանք պետք է կառուցեն իրենց առաջիկա աշխատանքները:

Այստեղ ավելորդ չենք համարում անել հետևյալ դիտողությունները:

Առաջին. սույն գրքում առաջադրվող բոլոր դիրեկտիվներն ու ցուցմունքները չպետք է տառացիորեն կիրառել, վորովհետև նրանք համամիութենական մասշտաբով են նախատեսված և յուրաքանչյուր վայրում ու յուրաքանչյուր դեպքում պետք է անպայման հարմարեցվեն տեղական պայմաններին ու առանձնահատկություններին: Սա չի նշանակում իհարկե, վոր մեր տեղական միավորները, կամ առանձին ընկերները այս պետք է դարձնեն ինքնապահովագրման մի պատրվակ և հիմնվելով տեղական «օբյեկտիվ» պայմանների վրա՝ հրաժարվեն ընդհանրապես վորևէ ձեռնարկում կատարելուց:

Յերկրորդ. այս գրքում չեն շոշափված կուլտուր-քաղաքական աշխատանքի անխտիր բոլոր բնագավառները, այլ դրված են գլխավորապես միասնական պլանի և կուլտ-քաղխորհուրդների վերաբերյալ կազմակերպչական ցուցմունքներ, հետևաբար նրանով առաջնորդվելիս ծանրության կենտրոնը չպետք է դարձնել միայն շոշափված խնդիրները, իսկ ուշադրության շրջանակից դուրս թողնել այնպիսի կարևոր բնագավառներ, ինչպես օրինակ՝ անգրագիտության վերացումը, պարտադիր ուսուցումը, պոլիտեխնիզացիան և այլն:

Յերրորդ. առանձնապես նշում ենք, վոր յերկու ֆրոնտի վրա պայքարն ուժեղացնելիս, միևնույն ժամանակ յերբեք չպետք է մոռացության տալ կուլակային-դաշնակցական իդեոլոգիան և դաշնակցականների ինտերվենցիոնիստական ակտիվ ձեռնարկումները, նրանց դեմ կազմակերպել անհաշտ ու հետևողական պայքար, մոբիլիզացիայի յենթարկելով աշխատավորական լայն մասսաների ուշադրությունը հակահեղափոխական ռեակցիոն վտանգությունների դեմ:

Սույն լրացումներով հասկանալով և կիրառելով այս գրքույկում առաջադրվող դիրեկտիվներն ու ցուցմունքները, մենք պետք է անհրաժեշտ բեկումն ստեղծենք պրոֆմիությունների կուլտուր-քաղաքական ու մասսայական աշխատանքներում և դրանով ապահովենք կուսակցության և վերադաս պրոֆմարմինների վորոշումների լիակատար կենսագործումը:

Հնգամյակի յերրորդ, վճռական տարվա արդյունաբերության և գյուղատնտեսության պլանների կատարումը պահանջում է վճռական տեմպեր, բոլշևիկյան հետևողական աշխատանք, անվերապահ նվիրվածություն նաև պրոֆկուլտքաղ բոլոր աշխատողներից, ճիշտ այնպես, ինչպես զանգվածի բանվորին սոցմրցման և հարվածայնության նշանաբանի տակ կոչել է սոցիալիզմի կառուցման մեծ գործին։

Սոցիալիզմի կառուցման համար պայքարող մարտիկի այդ հատկանիշը մեր աշխատանքի օրգանական և անբաժան մասը պետք է դարձնել կուլտուրական հեղափոխության ճակատամասի հարձակողականում։

ՀԱՄԽ-ի ԿՈՒԼՏ ՍԵԿՏՈՐ



# I.

## ԿՈՒԼՏՈՒՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՇԻՆՎԱՅՐԵՐՈՒՄ

(ՀԱՄԿԽ-ի կուլտ-սեկտորին կից 1931 թ. մարտի 15—20-ին կայացած՝ ձեռնարկությունների յեվ շինվայրերի կուլտ խորհուրդների նախագահների խորհրդակցության վորոշումները)

## Ձեռնարկությունների կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլան կազմելու հիմնական սկզբունքներն ու մեթոդները

ՀԱՄԿԽ-ի 5-րդ պլենումը, ամփոփելով պրոֆմիությունների վերակառուցման աշխատանքների արդյունքները, նշեց, որ մեր ձեռնարկությունների մեծ մասում կուլտուր-քաղաքական աշխատանքի համար միասնական պլաններ գոյություն չունեն, և իր ամբողջ սրությամբ դրեց կուլտաշխատանքի միասնական պլանի մասին ղեկավար մարմինների տված կարևորագույն դիրեկտիվների պրակտիկ կենսագործման հարցը:

1. Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլան ստեղծելու և այն իրագործելու հիմնական պայմանը պետք է լինի բանվորական մասսաների ակտիվ մասնակցությունը կուլտուրական շինարարության գործին, կուսակցության գլխավոր գծի կենսագործման համար, վճռականորեն պայքարելով երկու ֆրոնտի դեմ՝ ինչպես տվյալ շրջանի գլխավոր վտանգի, հանուն արդպլանների կատարման, հանուն տեխնիկայի տիրապետման:

2. Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանը պետք է դուրս վանի աշխատանքի զուգահեռականությունը, մոբիլիզացիայի ենթարկի մասսաներին կատարելու ինչպես տվյալ ձեռնարկության, այնպես էլ շրջանի ու մարզի կուլտուր-քաղաքական

խնդիրները և ապահովի ձեռնարկություններում կուլտուրական աշխատանքը կատարող կազմակերպությունների գործողությունների միասնությունը:

## Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանի հիմնական սկզբունքները

3. Միասնական պլանը ձեռնարկություններում, խորհտնտեսություններում և մեքենա-տրակտորային կայաններում կազմվում է արդֆինպլանի և կադրերի պատրաստման պլանի հիման վրա, հիմնական խնդիր ունենալով՝ ապահովել այն պայքարի հաջողությունը, որպիսին մղում են մասսաները տվյալ ձեռնարկության արդֆինպլանի ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշների կատարման ու գերակատարման համար:

Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանը ձեռնարկությունում, հանդիսանալով իբրև գործողությունների ղեկավարություն, ընդգրկում է կուլտուրական հեղափոխության խնդիրների լուծման հետ կապված հիմնական ձեռնարկումները (անգրագիտության վերացում, կադրերի պատրաստում, բանվորական հասարակայնության մոբիլիզացիան պարտադիր ուսման պլանների կատարման համար, դպրոցի վերակառուցումը պոլիտեխնիկական հիմունքով, կուլտուր-կենցաղային աշխատանք և այլն):

4. Միասնական պլանը պետք է կառուցվի հիմք ունենալով ձեռնարկության, ցեխի, կամավոր ընկերությունների բնակարանային-ակցիոներական ընկերությունների, յենթաշեֆ զորամասերի, դպրոցների, կոոպերատիվ և այլ կազմակերպությունների վողջ ուժերի



հաշվեառումն ու կազմակերպումը, տվյալ ձեռնարկության կուլտուր-քաղաքական աշխատանքի վճռական ճակատամարտում նրանց նպատակահարմար վերադասավորում կատարելու համար:

5. Միավորելով կուլտխորհրդի մեջ մտնող բոլոր կազմակերպությունների ուժերը և պլանավորման յենթարկելով նրանց միջոցները, կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանը ամենևին չի խլում նրանց ոպերատիվ-կազմակերպչական ինքնուրույնությունը, այլ այդ կազմակերպություններին ակտիվ կերպով մասնակցել է տալիս միասնական պլանի այն մասի կատարմանը, վորը հենց նրանց պլանային առաջադրություններին է վերաբերում, բարձր աստիճանի վրա դնելով ձեռնարկության կուլտուր-քաղաքական աշխատանքի հետ կապված բոլոր կազմակերպությունների պատասխանատվությունը:

Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանը պահանջում է, վորպեսզի միասնական պլանով միավորվող յուրաքանչյուր կազմակերպություն և հիմնարկություն առկա ունենա ընդհանուր առաջադրություններից բխող ինքնուրույն ոպերատիվ պլան և պատասխանատվություն կրի նրա կատարման համար:

6. Գործարանեղկոմներին կից կազմակերպված կուլտխորհուրդները պետք է ղեկավարեն ձեռնարկությունների վողջ կուլտուր-քաղաքական և ուսումնաարտադրական աշխատանքը, այն վարելով պրոֆմիութենական, տնտեսական և հասարակական մարմինների կողմից այդ աշխատանքին հատկացվող ուժերի և միջոցների համախմբման միասնական պլանի հիման վրա: Միասնական պլանը կուլտուր-քաղաքական աշխատան-

քի միասնական պլանի մի մասն է կազմում, վորով հաշվի չի առնվում վողջ ներքին ռեսուրսների մոբիլիզացիան: Միասնական ֆինպլանը հաշվի չի առնվում չեկամըտի ու ծախքերի աղբյուրներն ընդհանուր նախահաշվի շրջանակներում, բայց չի պահանջվում կենտրոնացնել բոլոր միջոցները կուլտխորհրդի միասնական դրամարկղում, բացի առանձին դեպքերից, վորոնց առթիվ վորոշումներ է ընդունում կուլտխորհուրդը և վորը հաստատում է գործարանեղկոմը:

7. Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանի իրագործման համար կուլտխորհուրդը հաշվետու է գործարանեղկոմների առաջ. վերջինս միասնական պլանի կատարումն ապահովում է սիստեմատիկ ղեկավարությամբ, անվական վերահսկողության տակ դնելով պլանի կատարումը, մասսայական ստուգման յենթարկելով, թե ինչքան է ժամանակին կատարվել և ինչպիսի վորակով է կատարվել միասնական պլանի աշխատանքը, ինչպես են իրագործվում նրա կատարման ժամկետներն ու տեմպերը, սիստեմատիկ կերպով զեկուցումներ է լսում կուլտխորհրդի աշխատանքի մասին գործարանեղկոմի պլենումում, բանվորական և պատգամավորական ընդհանուր ժողովներում, կոնֆերանսներում և այլն:

8. Կուլտուրական շինարարության շրջանային խորհրդի ղեկավարությունը ձեռնարկությունների կուլտխորհուրդների նկատմամբ՝ շրջանային պլանի կատարման մասում՝ իրագործվում է համապատասխան պրոֆմիութենական կազմակերպությունների (շրջպրոֆխորհուրդ, մարզային բաժին) միջոցով:

Կուլտուրական շինարարության շրջխորհուրդը շրջպրոֆխորհուրդների և գործարանեղկոմների միջոցով ստուգում է, թե ինչպես է ձեռնարկության կուլտխորհուրդը կատարել շրջանի միասնական պլանի առաջադրությունները, այդ նպատակով լսելով նրանց զեկուցումները, ստուգելով և ուսումնասիրելով աշխատանքը ձեռնարկություններում:

Շրջանային միասնական պլանի կատարման պատասխանատվությունը ձեռնարկությունում ընկնում է գործարանեղկոմի վրա:

9. Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանի յուրաքանչյուր բաժինը նախատեսում է բանվորների առանձին խմբերի պահանջների սպասարկումը (հարվածայիններ, նոր կադրեր, յերիտասարդություն, ազգային փոքրամասնություններ, կանայք և այլն):

Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանում պետք է ապահովել առաջնորդիչ պրոֆեսիաների բանվորների և հարվածայինների քաղաքատիպարակչական առաջնահերթ սպասարկումը:

## Միասնական պլանի կազմակերպության ձևերն ու մեթոդները

10. Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանի հիմնական բաժինները պետք է լինեն հետևյալները.

ա) արդֆինպլանի կատարման ու վորակի բարձրացման համար և կորուստների դեմ պայքարելու, ներքին ռեսուրսները մոբիլիզացիայի յենթարկելու, աշխատանքային կարգապահությունը ամրացնելու և հարվածայնության ու սոցմրցման գործը տալու մասսայական կուլտ միջոցառումներ (կոնֆերանսներ, ցու-

ցահանդեսներ, յերեկույթներ, «սև դրամարկղներ», բրակի մուզեյներ և այլն):

բ) արտադրական-տեխնիկական պրոպագանդա (արտադրության ներածական դասընթացները, որակավորման բարձրացման մասսայական աշխատանք, խմբակներ և այլն).

գ) անգրագիտության վերացման աշխատանք.

դ) պարտադիր ուսում, պոլիտեխնիզացիա, յերեխաների կոմունիստական դաստիարակություն.

յե) Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման աջակցություն (շեֆ աշխատանք, տնտեսական-քաղաքական կամպանիաներ, գրագրություններ 25-հազարականների հետ, կադրերի վերապատրաստում).

զ) պայքար կադրերի համար և պրոֆքաղաքական լուսավորության գործի կազմակերպում.

է) պայքար նոր կենցաղի համար կոլեկտիվ կենցաղի կազմակերպման վերաբերյալ միջոցառումներ, հակակրոնական և հակաալկոհոլիկ աշխատանք և այլն).

ը) ինտերնացիոնալ դաստիարակություն, աշխատանք ազգությունների մեջ.

թ) ընթացիկ քաղաքական կամպանիաներ.

ժ) ռազմական պրոպագանդա:

Այս հարցերը մշակման են յենթարկվում կուլտխորհրդի առանձին բնագավառների և սեկտորների կողմից, մտցնելով բոլոր հիմնական միջոցառումները և կատարման կոնտրոլ ժամկետները:

Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանը կազմվում է տարեկան (հիմնական կոնտրոլ թվ–



վեր) և յեռամսյակային (կոնկրետ պլան, վորը բըղխում է տարեկան առաջադրություններից): Օրացուցային պլանները մշակվում են յեռամսյակային պլանների հիման վրա: Միասնական պլանը սահմանվում է պլանային ժամանակաշրջանի կոնկրետ առաջադրություններ այն կազմակերպությունների համար, վորոնք մասնակցում են կուլտխորհրդին, նշանակելով այդ միջոցառումների ժամանակը, տեղը և պատասխանատու կատարողները:

11. Հիմնականը պլանի մշակման պրոցեսում՝ դա մասսաների մասնակցությունն է նրա կազմության աշխատանքին և մասսայական կոնտրոլի ապահովումը:

Միասնական պլանը կազմվում է հետևյալ կերպ:

Կուլտխորհրդի բյուրոն, հիմնվելով վերադաս կազմակերպությունների դերեկտիվ ցուցումների վրա, մշակում է կուլտուր-քաղաքական աշխատանքի հիմնական ցուցանիշները և այն՝ իբրև միասնական պլան կազմելու հիմունք՝ ուղարկում է կուլտխորհրդի մեջ մտնող սեկտորներին և կազմակերպություններին:

Կազմակերպություններից և սեկտորներից նյութերըն ստանալուց հետո կուլտուր-քաղաքական աշխատանքի պլանը ակտիվի հետ միասին մշակվում է կուլտխորհրդի պլենումում և դրվում է ցեխերին, վորից հետո ցեխերի հանդիպական պլանների հիման վրա միասնական պլանը վերջնականապես հաստատվում է գործտեղկոմի միջոցով:

12. Կուլտխորհրդի միասնական պլանը մշակվում է վողջ ձեռնարկության մասշտաբով: Յուրաքանչյուր ցեխը հիմնվելով ձեռնարկության միասնական պլանի վրա և հաշվի առնելով տվյալ ցեխի առանձնահատկու–

թյունները, մշակում է իր բանվորական արտադրական պլանը։

Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանը պետք է հասցվի մինչև առանձին բրիգադը, ագրեգատը, ստորին օղակը և անհատ բանվորը։

13. Մանր ձեռնարկություններում (որոնք կուլտխորհուրդ չունեն) գործարկոմի կուլտսեկտորը ցեխերի կուլտկազմակերպիչների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ժողով է հրավիրում, տալիս է կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանի կազմության ընդհանուր դիրքավորում, որից հետո վերջինս մշակվում է կուլտկազմակերպիչների միջոցով, դրվում է կոլեկտիվի քննությանը և հանձնվում է գործարանեղկոմին ի հաստատություն։ Գործարանեղկոմը կուլտուր-քաղաքական աշխատանքի պլանը դնում է ձեռնարկության բանվորների ընդհանուր ժողովում ի հաստատություն։

14. Այն ակումբը, որը սպասարկում է միայն մեկ ձեռնարկության, աշխատում է տվյալ ձեռնարկության կուլտխորհրդի միասնական պլանով։ Միջմիութենական և մի քանի ձեռնարկությունների սպասարկող ակումբներում միասնական պլանի կազմության մեթոդիկան մնում է նույնը, իսկ նրա կազմության ելակետը հանդիսանում է առաջնորդող ձեռնարկության արդֆինպլանը կամ միջմիութենական մարմնի (պրոֆխորհուրդ, մարզային պրոֆխորհուրդ և այլն) առաջադրած պլանը։

15. Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանի կատարման ստուգումը կատարվում է կուլտխորհրդի կազմպլանային սեկտորի միջոցով



(կուլտուր քաղաքական աշխատանքի առանձին բնագավառներն ստուգող բրիգադներ կազմակերպելով և այլն)։ Կուլտխորհրդի աշխատանքն ստուգելու համար գործարանեղկոմները կազմակերպում են ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ։

## Կազմակերպչական միջոցառումներ

Վերջին ժամանակաշրջանում, չնայած իրենց մի շարք թերություններին, կուլտխորհուրդները դառնում են ձեռնարկությունների կուլտուր-քաղաքական աշխատանքի կազմակերպիչ կենտրոնները։ Միասնական պլանի զարգացման և նրա վերջնական արմատացման համար խորհրդակցությունը անհրաժեշտ է համարում․

1. ՀԱՄԿԽ-ի կուլտսեկտորը և պրոֆմիությունների կենտրոնական կոմիտեները անմիջապես պետք է մինչև ձեռնարկությունները հասցնեն կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանի կազմության սկզբունքներն ու ձևերը, որոնք մշակված են խորհրդակցության միջոցով և հաստատված են ՀԱՄԿԽ-ի կողմից։

2. Միասնական պլանավորման փորձը տեղերում ընդհանրացնելու, առհասարակ կուլտուր-քաղաքական աշխատանքի ձևերն ու մեթոդները գիտական մշակման ենթարկելու և մարզային (երկրային) պրոֆկաբինետները զինավորելու համար ՀԱՄԿԽ-ի կուլտսեկտորին կից ոչ ուշ, քան 1931 թ. մայիսի 1-ը, կազմակերպել պրոֆկաբինետ։ ՀԱՄԿԽ-ի պրոֆկաբինետին կից ստեղծել խոշոր ձեռնարկությունների և մարզային պրոֆկազմակերպությունների կուլտթղթակիցների ինստիտուտ։

59082.66
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
Гос. Биб. ՀՍՍՌ-Арм. ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3. Մասսայականացնելու համար կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանի կազմության այն փորձը, որը դրսևորվեց խորհրդակցությունում, քսան օրվա ընթացքում լույս ընծայել այդ հարցին նվիրված հատուկ բրոշյուր:

4. Կուլտուր-քաղաքական աշխատանքի բովանդակության, ձևերի և մեթոդների առանձին հարցերի մշակման համար առանձնացնել մի շարք ձեռնարկություններ, երեք փորձնական-կուլտուրական բազաներ, որտեղ ՀԱՄԿԽ-ի պրոֆկաբինետի ղեկավարությամբ փորձնական աշխատանք կազմակերպել:

Օգոստոս ամսին ՀԱՄԿԽ-ի կուլտսեկտորը պետք է լսի փորձնական-կուլտուրական բազաների զեկուցումները:

5. Միասնական պլանի վերաբերյալ աշխատանքի փորձի ընդհանրացումը պետք է կատարեն պրոֆկազմակերպությունները՝ լուսբաժինների և գիտական-հետազոտական կազմակերպությունների հետ միասին:

Ձեռնարկությունների կուլտաշխատանքի դասընթացների բոլոր ծրագրերում պետք է մտցնել «Ձեռնարկությունների կուլտաշխատանքի միասնական պլան» բաժինը:

6. Համամիութենական ակմբային խորհրդակցության տարեդարձի կապակցությամբ ապրիլ ամսում ամփոփել աշխատանքի վերակառուցման և ձեռնարկությունների կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանի կազմության արդյունքները, իսկ մայիս ամսին, հիմնվելով արդյունքների ամփոփման վրա, կազմակերպել արդյունաբերական մարզերի ու խոշորագույն ձեռնարկությունների միջև հատուկ մրցականչ,



## Քաղպրոֆլուսավորությունը և պրոֆկադրերի պատրաստումը ձեռնարկություններում (Ընկ. Մարտեմյանովի զեկուցման առթիվ ընդունված բանաձևը)

1. Պրոֆկադրերի սիստեմատիկ մասսայական պատրաստումը ձեռնարկություններում պետք է իրագործվի պրոֆլուսավորության ցանցի միջոցով, որի հիմնական խնդիրներն են հանդիսանում.

ա) վերացնել նոր բանվորների ու բանվորական հետամնաց շերտերի քաղաքական անգրագիտությունը, բարձրացնել նրանց դասակարգային գիտակցությունը, մոբիլիզացիայի ենթարկել սոցիալիստական շինարարության խնդիրների կատարման համար, ներգրավել պրոֆմիությունների մեջ.

բ) դաստիարակել այնպիսի ամուր պրոֆակտիվ (առաջին հերթին հարվածայիններից), որն ընդունակ լինի մասսաներին մոբիլիզացիայի ենթարկել պայքարելու կուսակցության գլխավոր գծի համար, պայքարելու ամեն տեսակ թեքումների դեմ պրոֆաշխատանքում, առաջին հերթին աջ ուկլոնիստական, տրեդյունիոնիստական տենդենցների դեմ.

գ) «տեխնիկային տիրապետելու» լոզունգին համապատասխան՝ ապահովել պրոֆմիության անդամների ընդհանուր տեխնիկական մակարդակի բարձրացումը և նրանց ծանոթացնել տվյալ արտադրական ճյուղի կազմակերպմանն ու պրոցեսին:

2. Քաղպրոֆլուսավորության ցանցի դրությունն ու աշխատանքը ձեռնարկություններում ներկայումս միանգամայն անբավարար են և ամենևին չեն ապահովում առաջադրված խնդիրների կատարումը: Մի ամ-

բաշխի կուլտսպասարկումն ու կուլտուրական հանգստի կազմակերպումը։

Խորհրդակցությունը իբրև հիմնական միջոցառումներ հանձնարարում է հետևյալը․

Սահմանել կուլտխորհրդի պատասխանատու աշխատողների իրիկնային և գիշերային հերթապահություններ․ ցերեկում կազմակերպել հերթային կուլտակտիվ և հերթային կուլտբրիգադներ վորոշ առաջադրությունների կատարելու համար․ (հերթային պատի թերթերի հրատարակություն, ինքնագործուն դեկլամատորական խմբակների ելույթներ, ռադիո-կոնցերտներ, սեփական ռադիո-հանգույց և այլն)։

Անհրաժեշտ է միջոցների համապատասխան բաշխում կատարել հերթերի կուլտուր-քաղաքական աշխատանքի համար։

ՀԱՄԿԽ-ը 1931 տարվա ընթացքում պետք լսի մի շարք պրոֆխորհուրդների և խոշոր ձեռնարկությունների զեկուցումները հերթերի կուլտուր-քաղաքական աշխատանքների մասին։

10․ Ի կատարումն ՀԱՄԿԽ-ի այն վորոշումների, վորոնք վերաբերում են արտադրական խմբերում պրոֆ աշխատանքը ծավալելու խնդրին, ձեռնարկությունների կուլտխորհուրդները անհապաղ պետք է ձեռնարկեն խմբերում կուլտուր-քաղաքական աշխատանքի կազմակերպման և խմբային կուլտկազմակերպիչների նշանակման աշխատանքին, վերջիններիս շուրջը համախմբելով խմբի կուլտակտիվին։ Խմբերի միջև կուլտաշխատանքի շուրջը սոցմրցում կազմակերպել։

---



վորի արդյունքների վրա հիմնվելով մշակել տարբեր պրոֆմիությունների համմիութենական համագումարին ներկայացնելու համար։

7․ ՀԱՄԿԽ-ի կուլտսեկտորը վիճակագրական սեկտորի հետ միասին պետք է սահմանի կուլտուր-քաղաքական աշխատանքի հաշվառման ու հաշվետվության նոր ձևեր, հիմնվելով նրա մեքենայացման վրա, և վոչ ուշ, քան մայիսի 1-ը ուղարկել տեղերը։

8․ Արմատապես վերակառուցել «Կուլտուրնայա ռեվոլյուցիա» ժուռնալը այն հաշվով, վորպեսզի նա դառնա ձեռնարկությունների կուլտուր-քաղաքական աշխատանքի մեթոդիկայի, պրակտիկայի և փորձի փոխանակման հարցերի ղեկավար օրգանը։

9․ Խորհրդակցությունը նշում է ձեռնարկություններում պլանային կուլտուր-քաղաքական աշխատանքի՝ վորպես սիստեմի՝ բացակայությունը։ Կուլտխորհուրդները դեռևս իրենց ամենօրյա սիստեմատիկ աշխատանքում ծանրության կենտրոնն են դարձնում միայն ցերեկվա և իրիկվա հերթերը (կուլտձեռնարկումների առատություն, կուլտ ուժերի վերադասավորում, ուսուցում և այլն)։

Միաժամանակ պետք է մատնանշել, վոր նաև այն կազմակերպությունները, վորոնք կոչված են աջակցելու ձեռնարկությանը կուլտուր-քաղաքական աշխատանքի խնդրում (թատրոնները, կուլտուրայի տները, քաղլուսավորական հիմնարկությունները և ԲՈՒՀ-երը), այդ աջակցությունը ցույց են տալիս ցերեկները։ Խորհրդակցությունը առաջարկում է բոլոր կազմակերպություններին վերակառուցել իրենց աշխատանքը՝ հերթադարձ կատարելով դեպի յերեք հերթերի հավասա-

բողջ շարք պրոֆկազմակերպություններում, նույն թվում խոշոր արդյունաբերական պրոֆկազմակերպություններում, պրոֆուսուցման ցանցը կամ բոլորովին բացակայում է, կամ մասսայական բնույթ չի կրում և աշխատում է խոշոր թերություններով:

Մի շարք կազմակերպչական թերություններին զուգընթաց, վորոնք բացասաբար են անդրադառնում պրոֆուսուցման ցանցի աշխատանքի ծավալման վրա (կուրսուսուցման ցանցից հետ մնալը, քաղպրոֆուսուցման համար մասսայական կամպանիա չտանելը), բազմաթիվ ձեռնարկությունների պրոֆուսուցման ցանցի անբավարար դրության հիմնական ու վճռական պատճառն է հանդիսանում պրոֆլուսավորության՝ վորպես քաղաքական աշխատանքի ու կադրերի դաստիարակման կարեվորագույն մի միջոցի՝ օպորտունիստական թերագնահատությունը, վորպիսին այդ կազմակերպություններում արտահայտվել է նրանով, վոր բացակայել է ղեկավարությունը պրոֆուսուցման հանդեպ, անպատասխանատու վերաբերմունք է ցուցաբերվել պրոպագանդիստներով, ուսումնական ձեռնարկներով ու շենքերով ապահովելու գործի նկատմամբ և այլն:

Պրոֆմիության անդամների քաղաքական դաստիարակման և բոլշևիկյան կոփման խնդիրը չի կարող իրագործվել՝ յեթե յերբեք վճռական պայքար չծավալվի քաղպրոֆլուսավորության թերագնահատման դեմ, իբրև պրակտիկայում հանդես յեկող աջ թեքման: Անհրաժեշտ է շարունակել խորհրդային պրոֆշարժման մեջ հայտնաբերվող տրեդյունիոնիզմի և օպորտունիզմի տեսաբանների (Ցարոցկու տիպի) մերկացման աշխատանքը, անհրաժեշտ է լայն պրոպագանդայի նյութ



դարձնել լենինիզմը, և հատկապես Լենինի ուսմունքը պրոֆմիությունների մասին: Դրա համար առաջարկել պրոֆկազմակերպություններին ապահովելու հատուկ բաժին կուրսային ուսուցման վողջ ցանցում: Ակումբներում կազմակերպել պրոֆմիությունների լենինյան ուսմունքի հատուկ յերեկոներ: Ստուգել, թե ինչ չափով են գրադարանները կարողացել իրագործել լենինիզմի պրոպագանդայի խնդիրը:

3. Քաղպրոֆլուսավորության ցանցը զարգացնելիս պետք է հաշվի առնել հատուկ խնդիրներ այն է՝ ուսման ցանցում ընդգրկել հետեվյալ խմբերին— Հարվածայիններին, գործարանեղկոմների կամավոր ակտիվին, ցեխային ընտրովի ղեկավար ակտիվին, տարեկերյա բանվորներին, նոր բանվորներին և կուլտուրապես հետամնաց ազգությունների բանվորներին:

Անհետաձգելի խնդիր է հանդիսանում բարելավել քաղպրոֆուսուցման վողջ ստորին ցանցի ղեկավարությունն ու կարգավորել այն՝ հիմք ունենալով միասպլանը, վորն այս բնագավառում ընդգրկում է կուսակցության, պրոֆմիութենական, կոմյերիտական և այլ կազմակերպությունների աշխատանքը:

## Քաղդաստիարակչական աշխատանքը նոր բանվորների հետ

4. Առաջնահերթ խնդիր է քաղպրոֆլուսավորության ցանցում ընդգրկել այս տարի արտադրության մեջ մտած նոր բանվորների հետ միասին նաև այն 2 միլիոն բանվորներին, վորոնք արտադրություն են մտնելու 1931 թ. ընթացքում, վորպեսզի նրանք դառնան գիտակից անդամներ, քաղաքականապես և տեխնիկապես գրագետ մասնակիցներ ինչպես տվյալ ձեռնարկության,

այնպես էլ վողջ սոցիալիստական շինարարության աշխատանքներին:

Այդ խնդրի իրագործման հիմնական ձևը պետք է լինեն արտադրության ներածական դասընթացները, 2 ամսից սկսած (գրագետների համար) մինչև 6 ամիս (անգրագետների համար) ուսման շրջանակով: Դասընթացները պետք է կազմակերպվեն կամ ըստ ցեխերի, կամ համագործարանային մասշտաբով և նպատակ պետք է ունենան վերացնել ընդհանուր, արտադրական տեխնիկական և քաղաքական անգրագիտությունը: Այս դասընթացների հիմնական՝ արդյունքներից մեկը պետք է լինի այն, վոր նրանց ունկնդիրները գլխովին պրոֆմիության անդամ դառնան: Դասընթացները կազմակերպվում են լրացուցիչ բանվորական կրթության սիստեմով:

## Բանվոր հարվածայինների հասարակական-քաղաքական և տեխնիկական վորակավորման բարձրացումը

5. Հարվածայինի նկատմամբ ներկա տարում ուշադրությունը պետք է կենտրոնացնել մասսայական տեխնիկական ուսուցման կազմակերպման վրա.

Քաղպրոֆլուսավորության ցանցը, հարվածայինի հասարակական-տեխնիկական պատրաստականությունը բարձրացնելու հետ միասին, պետք է աջակցի նրա հետագա տեխնիկական ուսուցման, ինչպես նաև հարվածայիններից արտադրության կազմակերպիչների (բրիգադներ, խմբակային կազմակերպություններ և այլն) կադրերի առաջ քաշելու գործին:

Հիմնական դպրոցը պետք է լինի միամյա դպրոցը,



վորը, հասարակական-քաղաքական պատրաստության (նախնական քաղդպրոցի ծավալից վոչ պակաս) հետ միասին, տալիս է տեխնիկական ուսուցման իրագործման համար անհրաժեշտ հանրակրթական գիտելիքների մինիմումը, ինչպես նաև տեխնիկական մինիմումը:

Միամյա դպրոցի տեխնիկական մինիմումը պետք է կարողանա ապահովել այնպիսի մի դրություն, վոր նրա ունկնդիրները ծանոթանան տվյալ ցեխի (գործարանի) արտադրության հիմնական տեսակներին և նրանց տեխնոլոգիական պրոցեսներին, այլ ձեռնարկությունների լավագույն փորձին և արտասահմանյան տեխնիկայի նվաճումներին, մանրամասն վերլուծեն ցեխի արդֆինպլանը և նրա բաղկացուցիչ մասերը (աշխատանքի արտադրողականություն, ինքնարժեք և այլն), ուսումնասիրեն ռացիոնալացման պլանը, բանվորների, հարվածային բրիգադների և ՃՏՍ-ների առաջարկները: Դպրոցի տեխնիկական մինիմումի ծրագիրը կուլտխորհրդի ղեկավարությամբ մշակում է տվյալ ձեռնարկության ՃՏՍ-ն: Երբ աշխատանքի բավականաչափ փորձ կկուտակվի, կարելի կլինի գնալ արտադրության կարևորագույն ճյուղերի համար տեխմինիմումի տիպական ծրագրեր մշակելու խնդիրը:

Այս դպրոցի ուսումնական պլանն ու ծրագրերը պետք է հնարավորություն տան, վոր ավարտողներն իրենց ուսուցումը շարունակեն այլ ուղղությամբ — կուսխորհրդային դպրոց (հետագայում երեկոյան կոմունիստական ԲՈՒՀ անցնելու համար), բանֆակ, երեկոյան տեխնիկում, շրջանային պրոֆդպրոց, պրոֆհամալսարան:

6. Անհրաժեշտ է վճռականորեն ընդառաջել և Ս. Միության բոլոր ձեռնարկություններում տարածել

Մարտի անվան (Լենինգրադ) և «Կրասնի Պերեկոպ» (Յարոսլավլ) գործարանների փորձը այն է՝

Հերթական քաղաքական հարցերի մասսայական մշակումը անմիջապես ցեխում, աշխատանքից հետո, տասն րոպե մեկ անգամ: Կարևորագույն նշանակություն ունի այն լայն նախապատրաստական աշխատանքը, որը անց է կացվում յուրաքանչյուր քաղպարապմունքից առաջ (պլակատներ, փաստական և տեղական նյութեր, վորոնք տպագրվում և տրվում են ամեն մի բանվորի և այլն): Աշխատանքի այս ձևը, վորը ապահովում է ինչպես հարվածայինների (այդ թվում նաև տեխնիկական խմբակների ցանցում սովորողների), այնպես և միաժամանակ մնացած բանվորական մասսայի ընդգրկումը քաղուսուցման ցանցում, նպաստում է դրսևորելու հարվածայինի ակտիվությունը և բարձրացնում է նրա անմիջական ղեկավարչական դերը մնացած բանվորների նկատմամբ:

Անհրաժեշտ համարել լայնորեն մասսայականացնելու այս փորձը մամուլի միջոցով:

Նրա ավելի խորը մշակման համար ընթացիկ քաղաքականության առանձին հարցերի շուրջը ցեխերում կազմակերպել թեմատիկ խմբակներ, տարբեր հերթերի համար առանձին-առանձին:

7. Արտադրական-տեխնիկական ուսուցման ցանցում հասարակական-քաղաքական դաստիարակության ներկա դրվածքը չի համապատասխանում ոչ միայն տեխնիկական որակավորված բանվորի, վարպետի ու տեխնիկի, այլև մասսաների կազմակերպչի պատրաստման պահանջներին: Յուրաքանչյուր ձեռնարկության կուլտխորհրդի առաջիկա անելիքը պետք է լինի ստուգել քաղդաստիարակչական աշխատանքը արտադրական-տեխնիկական ուսուցման ցանցում, վերանայել հասարակական գիտությունների դասատուների կադրերը և դպրոցների ու դասընթացք· ամենօրյա մասնակցություն կազմակերպել ձեռնարկությունների հասարակական կյանքին:



Անհրաժեշտ համարել՝ խմբակների մասնակիցների հանրաքաղաքական տեսադաշտն ընդարձակելու համար ակմբային խմբակների վողջ սիստեմում քաղմինիմում սահմանել:

## Կամավոր ակտիվի պատրաստումը

8. Կամավոր ակտիվի լայն կադրերի դաստիարակությունը պրոֆաշխատանքի վերակառուցման կարևորագույն պայմաններից մեկն է կազմում, ուստի անհրաժեշտ է առանձնապես ապահովել ուսուցման այնպիսի ձևերի զարգացումը, վորոնք նպաստում են հասարակական-քաղաքական և արտադրական-տեխնիկական մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև պրոֆաշխատանքի համապատասխան բնագավառում գործնական որակավորում ձեռք բերելուն:

Ընտրովի ակտիվի (ցեխկոմ, խմբային կազմակերպիչ), ինչպես նաև գործարկոմի սեկտորներում աշխատող կամավոր ակտիվի սիստեմատիկ պատրաստման գործը կազմակերպելու հիմնական ձևն է հանդիսանում դպրոց-գործարկոմը, վորը թեորետիկական ուսուցումը օրգանապես պետք է շաղկապի ակտիվի ամենօրյա գործնական աշխատանքին (Լենինգրադի մի քանի գործարանների փորձը):

9. Լայն գործադրել աշխատանքի առանձին տեղամասերի համար կամավոր ակտիվի կարճատև կուրսեր

կազմակերպելու փորձը, վորը լիովին արտացոլել է իրեն (արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչներ, ցեխային կուլտաշխատանքի կազմակերպիչներ, սոցիալիստական մրցության աշխատողներ, առաջնորդ պրոֆեսիաների աշխատանքի կազմակերպիչներ և այլն): Դասընթացների ուսման ժամկետը 1½–2 ամիս է, առանց աշխատանքից ազատելու: Խնդիր առաջադրել՝ ընթացիկ տարում կամավոր ակտիվի հիմնական տեսակների 3 ամսվա ուսում տալ:

10. Իբրև օրենք, սահմանել, վոր կամավոր պրոֆակտիվը մասսայաբար ընդգրկվի յերկօրյա և յեռօրյա կուրս-կոնֆերանսներում, վորտեղ ուսումնասիրվելու յեն քաղաքական կյանքի և պրոֆաշխատանքի կարևորագույն հարցերը (ՀԱՄԿԽ-ի 5-րդ պլենումի արդյունքները, կուսակցական պլենումների և կոնֆերանսների արդյունքները, խորհուրդների համագումարների արդյունքները, գարնանացանի կամպանիան, տնտեսական տարվա առաջին յեռամսյակի արդյունքները, բերքահավաքի կամպանիան և այլն):

11. Պրոֆկազմակերպությունների առաջ խնդիր դնել՝ հեռակա պատրաստման (ներառյալ նաև տեխնիկական ուսուցման) բոլոր տեսակներով ընդգրկել յուրաքանչյուր ձեռնարկության ընտրովի պրոֆակտիվի մինչև 30%-ը և գործարկոմի կամավոր պրոֆակտիվը: Նպատակահարմար համարել կուլտբազխորհրդին կից կազմակերպելու հեռակա ուսուցման աջակցող խմբակ: Այդ խմբակների առաջ խնդիր դնել կոնսուլտացիաների, խորհրդակցությունների և այլ միջոցներով կազմակերպել հեռակայիններին օգնելու գործը:



## Քաղդաստիարակչական աշխատանքը օտարյերկրա բանվորների, ազգային հանրապետությունների յեվ ազգային փոքրամասնությունների բանվորների մեջ

12. Առանձնապես կարևոր նշանակություն ունի քաղպրոֆուսուցման կազմակերպումը օտարերկրյա բանվորների մեջ: Խնդիր առաջադրել՝ օտարերկրյա բանվորության ամբողջ կազմը անցկացնել նորմալ քաղդպրոցի ծավալով քաղաքական գիտելիքներ տվող դպրոցով, այդ աշխատանքը շաղկապելով ռուսերեն լեզվի ուսուցման հետ: Անհրաժեշտ համարել ընթացիկ տարում հատուկ քաղային պրոֆինտերդպրոցներ ունենալ այն վայրերում, վորտեղ ամենից ավելի յեն կենտրոնացած օտարերկրյա բանվորները: Այդպիսի պրոպագանդիստներ պատրաստելու համար կազմակերպել կենտրոնական կարճատև կուրսեր:

13. Ազգային փոքրամասնություններից պրոֆկադրեր պատրաստելու, նրանց մեջ պրոֆուսուցում կազմակերպելու գործը ամենից ավելի թույլ բնագավառն է հանդիսանում:

Անհրաժեշտ է վճռականորեն հարվածել այդ աշխատանքի թերագնահատումը, վորպես մեծապետական շովինիզմի դրսևորում: Բոլոր կուլտխորհուրդները պետք է հատուկ ատյանում անցկացնեն և ապահովեն այդ բանվորների լրիվ ընդգրկումը առանձին ներածական դասընթացներում, կազմակերպելով դասավանդումը մայրենի լեզվով: Ներածական դասընթացներից բացի, այն ձեռնարկություններում, խորհտնտեսություններում և մեքենա-տրակտորային կայաններում, վորտեղ ազգային փոքրամասնությունների հոծ խմբեր

կան, ստեղծել քաղպրոֆլուսավորության բարձր տիպի ցանց մայրենի լեզվով:

Անհրաժեշտ է, որ ՀԱՄԿԽ-ը ապահովի ազգային լեզուներով հատուկ ձեռնարկների մշակումը:

14. Պարտադիր համարել, որ քաղպրոֆուսուցումը ազգային հանրապետությունների և մարզերի ձեռնարկություններում, խորհտնտեսություններում ու մեքենատրակտորային կայաններում տրվի մայրենի լեզվով: Այդպիսին պետք է ապահովել անմիջապես պրոֆպրոպագանդիստների լայն ցանց ծավալելով ինչպես նաև մայրենի լեզվով հիմնական ուսումնա-մեթոդական նյութեր պատրաստելով: Այդ ձեռնարկների ժամանակին հրատարակումն ապահովելու համար անհրաժեշտ է հաստատված ձեռագրերը անմիջապես ուղարկել ազգային հրատարակչություններին, առանց սպասելու, որ նրանք լույս ընծայվեն ռուսերեն հրատարակությամբ:

## Կազմակերպչական հարցեր

15. Անհրաժեշտ համարել խկույն ձեռնարկել քաղպրոֆլուսավորության մասսայական ձևերի համար պլաններ և ուսումնական ձեռնարկներ մշակելու աշխատանքին, այն հաշվով, որ հիմնական ծրագրերը մշակված լինեն ոչ ուշ, քան մայիսի 1-ը, իսկ ուսումնական ձեռնարկները՝ ոչ ուշ, քան օգոստոս ամիսը: Ուսման ամենից ավելի մասսայական տեսակներն ընդգրկող ձեռնարկները հրատարակել այնպիսի տիրաժով, որը կարողանա ապահովել նշված պլանների կատարումը:

16. Ոչ ուշ, քան մայիսի 1-ը բոլոր ձեռնարկու-



թյուններում կուլտխորհուրդները, կուսկազմակերպությունների հետ համաձայնեցնելով, պետք է մշակեն քաղպրոֆլուսավորության և պրոֆկադրերի պատրաստության միասնական պլան, հաշվի առնելով բազմահերթությունը և անընդհատ շաբաթը: Այդ պլանը պետք է ընդգրկի պրոպագանդիստների և գրուցավարների պատրաստումն ու վերապատրաստումը (նույն թվում՝ նաև ձեռնարկությունների երեկոյան դասընթացների միջոցով): Առանձնապես ապահովել ազգային փոքրամասնությունների բանվորների մեջ աշխատողների պատրաստումը:

17. Անհրաժեշտ համարել ձեռնարկություններում կազմակերպել կուսպրոֆկաբինետների լայն ցանց (առաջին հերթին խոշոր ձեռնարկություններում), որտեղ կենտրոնացնել ուսուցման ցանցի մեթոդական ղեկավարությունը, փորձի ընդհանրացումն ու ուսումնասիրությունը: Առաջարկել մարզային և շրջանային պրոֆխորհուրդներին՝ յեղած պրոֆկաբինետների միջոցով գործարանային պրոֆկաբինետներն ապահովել գործնական աջակցությամբ (ֆինանսավորում, գրականության հայթայթում, ծրագրա-մեթոդական նյութեր, խորհրդակցությունների հրավիրում և այլն):

## Ձեռնարկությունների կուլտքաղխորհուրդների խնդիրները տեխնիկայի տիրապետման ասպարիզում

(Ընկ. Ալեքսանդրովի զեկուցման առթիվ ընդունված բանաձևը)

1. «Տեխնիկան վերակառուցման շրջանում վճռում է ամեն ինչ: Տեխնիկայի ֆրոնտը դասակարգային անողոք պայքարի ֆրոնտ է: Տեխնիկային տիրապետելու խնդիրը «տեխնիկական-տնտեսական տեսակետից կապիտալիստական յերկրներին հասնել և անցնել» լոզունգի կատարման, յերկրի պաշտպանունակության ամրացման և վնասարարության հետևանքների վերացման հիմնական ողակն է» (Ստալին):

2. Կուլտխորհուրդները, վորոնք կոչված են՝ համաձայն ՀԱՄԿԽ-ի 5-րդ պլենումի վորոշումների՝ ղեկավարելու ձեռնարկությունների վողջ ուսումնա-արտադրական աշխատանքը, պետք է գլխավորեն այն շարժումը, վորպիսին սկսել են մասսաները տեխնիկային տիրապետելու ուղղությամբ, պետք է նշեն այն կոնկրետ միջոցառումները, վորոնք դրվելու յեն՝

ա) բանվորների և տնտեսավարների տեխնիկական ուսուցման,

բ) արտադրության կազմակերպման լավագույն որինակների և նրա հերոսների մասսայականացման և

գ) տեխնիկական պրոպագանդայի մասսայական ձևերի զարգացման ասպարեզներում:

3. Համաձայն հարվածայինների ընդհանուր տեխնիկական ուսուցում կազմակերպելու մասին ՀԱՄԿԽ-ի կողմից ընդունված վորոշման, այդ ամբողջ աշխատանքը պետք է կազմակերպել ըստ պրոֆեսիաների և ըստ բրիգադների, այն հաշվով, վորպեսզի բանվոր հարվածայինն իր դազգյահի ուսումնասիրությունից կարողանա աստիճանաբար անցնել ագրեգատի, ցեխի և վողջ գործարանի արտադրական պրոցեսի յուրացմանը:

Անհրաժեշտ է առանձին պրոֆեսիաների համար մշակել տեխնիկական մինիմում և այն հասցնել յուրաքանչյուր անհատ բանվորին:

Այստեղից յերկաթյա անհրաժեշտությամբ բխում ե ներկա մոմենտում հակակրոնական աշխատանքն ուժեղացնելու, կրոնի դասակարգային եյությունը մերկացնելու, կրոնի դեմ հետևողական իդեոլոգիական պայքար ծավալելու պահանջը: Կրոնական կազմակերպությունների նկատմամբ կուսակցության և խորհրդային իշխանության ունեցած քաղաքականության պարզաբանումը պրոֆմիութենական ակումբների հիմնական խնդիրներից մեկը պետք ե լինի: Անհրաժեշտ ե ամենախիստ հակահարվածը տալ հակակրոնական աշխատանքը նսեմացնելու կամ այն թեկուզ չնչին չափով թուլացնելու տենդենցներին:



## Պրոֆմիությունները կրոնի դեմ մղվող պայքարում

Պրոֆմիությունները, վորպես կոմունիզմի դպրոցներ, սիստեմատիկ հակակրոնական ագիտացիա և պրոպագանդա պետք ե վարեն, լայն մասսաներին, պարզաբանելով կրոնի դասակարգային եյությունը: Պրոֆմիությունների լայնածավալ հակակրոնական աշխատանքը առանձնապես անհրաժեշտ ե ներկայումս, յերբ արդյունաբերության ընդարձակման և արտադրության բուռն զարգացման հետևանքով պրոլետարիատի շարքերը լրացվում են զգալի չափով գյուղի հետ կապված և կրոնական հաշիշից դեռևս չազատագրված նոր կադրերով: Աշխատանքային դիսցիպլինայի բարձրացում, պայքար գործալքումների դեմ, աշխատանքի արտադրողականության և արտադրանքի վորակի բարձրացում, բրակի ու պարապուրդների տոկոսի նվազեցում, անընդհատ շաբաթի ըստ ամենայնի լիակատար ու արագ իրագործում, մասսաների քաղաքական ու կուլտուրական մակարդակի բարձրացում,— այս բոլոր խնդիրների լուծումն անհնարին ե առանց վճռական-

րեն ուժեղացնելու պրոֆմիությունների հակակրոնական աշխատանքը: Հետևաբար պայքարը կրոնի դեմ և հակակրոնական պրոպագանդան պետք է դրվեն իրրև պրոֆմիությունների կարևորագույն քաղաքական աշխատանք:

Այնինչ դեռևս շատ պրոֆմիութենական կազմակերպություններ և ակումբներ բացահայտ կերպով թերագնահատում են հակակրոնական աշխատանքի քաղաքական նշանակությունը: Տեղական պրոֆմիութենական և ակմբային աշխատողներից եղել են առանձին անհատներ, վորոնք հանդես են եկել կրոնի դեմ մղվող պայքարում պրոֆմիությունների չեզոքությունը պաշտպանելու օպորտունիստական պնդումներով. («Կրոնի դեմ պայքարելը պրոֆմիությունների պարտականությունը չէ, վորովհետև նրանք իրենց շարքերում ընդգրկում են անհավատների հետ միասին նաև հավատացյալների»):

Պրոֆկազմակերպությունները և բանվորական ակումբները մեծ մասամբ վորևե չափով կազմակերպված հակակրոնական աշխատանք չեն տանում: Հակակրոնական աշխատանքը կրում է կամպանիոն բնույթ և հիշվում է միայն կրոնական մեծ տոների ժամանակ:

Հակակրոնական աշխատանքի թերագնահատությունը հին ղեկավարության կողմից կապված էր տրեդյունիոնիստական տենդենցների հետ, վորպիսին արտահայտվում էր նրանով, վոր մոռացության էին տրվում հանրադաստիարակչային խնդիրները, կուլտաշխատանքը ապաքաղաքական բնույթ էր կրում, փակված ու կտրված էր սոցիալիստական շինարարության և դասակարգային պայքարի խնդիրներից:



Հին մեթոդների ջախջախումը և պրոֆմիությունների կուլտաշխատանքի ձևերի վճռական վերակառուցումը պետք է ընթանան կրոնի դեմ մղվող պայքարի ուժեղացմամբ: Կրոնի դեմ լայնածավալ ու վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը նսեմացնելու, առավել ևս այն ժխտելու ամեն մի փորձ պետք է ստանա ուժեղ հակահարված: Աջ օպորտունիստական, տրեդյունիոնիստական տենդենցները վճռականորեն պետք է հաղթահարել:

## Ակումբների հակակրոնական աշխատանքի թերությունները

Չնայած հակակրոնական պրոպագանդայի ծավալման ասպարեզում տեղի ունեցած վորոշ տեղաշարժերին, առանձին կազմակերպությունների կողմից հակակրոնական աշխատանքի թերագնահատումը կրոնի դեմ պայքարելու պրակտիկայում առաջացնում է մի ամբողջ շարք սխալներ, բացեր և խեղաթյուրումներ: Ակումբային աշխատանքում այդ թերությունները հետևյալներն են.

ա) ակմբի հակակրոնական աշխատանքը կտրված է սոցիալիստական շինարարության գործնական կոնկրետ խնդիրներից, չի շաղկապված հնգամյակի, անընդհատի, ինդուստրացման, կոլեկտիվացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, կուլտուրական մակարդակի բարձրացման և կենցաղի վերակառուցման հարցերի հետ.

բ) հակակրոնական ագիտացիայի և պրոպագանդայի բովանդակությունը թույլ է հագեցված քաղաքական ու բնագիտական հարցերով և մեծ մասամբ

հանգում է կույր ագիտացիայի, կրոնի դեմ ուղղված մակերեսային ծաղրանքի.

գ) ակմբի մասսայական հակակրոնական աշխատանքի ձևերն ու մեթոդները չեն կատարելագործվում, տարեց տարի մնում է շարունակ նույն ցածր վորակական մակարդակի վրա.

դ) բանվորական առանձին խմբերի (կանանց, յեբիտասարդների, սեզոնիկների, վորակյալ բանվորների) կուլտուր-քաղաքական մակարդակի առանձնահատկությունները հաշվի չեն առնվում, վոր հնարավոր լինի հակակրոնական աշխատանքի բովանդակությունն ու ձևերը համապատասխան ձևերով հարմարեցնել.

յե) ակումբը չի ուսումնասիրում կրոնական կազմակերպությունների գործունեությունը, նրանց գործադրած այն ձևերն ու մեթոդները (վորոնցով նրանք ազդում են բանվորության հետամնաց խավերի վրա), ինչպես նաև բանվորության կրոնական տրամադրությունները.

զ) ակմբային աշխատողները և ակմբային ակտիվը թույլ են պատրաստված հակակրոնական պրոպագանդա մղելու համար.

է) անաստվածների բջիջներ ու խմբակներ վոչ բոլոր ակումբներում են կազմակերպված և բավականաչափ ուշադրության ու աջակցության չեն արժանանում.

ը) չկա ակումբների հակակրոնական աշխատանքի հաշվառում, բացակայում է փորձի փոխանակությունը:

Այս բոլոր թերությունները ցույց են տալիս, վոր



ակումբները հակակրոնական աշխատանքի կենտրոններ դարձնելու մասին կուսակցության տված դիրեկտիվը դեռևս կատարված չէ:

## Ի՞նչպես դնել ակմբային հակակրոնական աշխատանքը

1. Ակումբների հակակրոնական աշխատանքը չըպետք է կամպանիոն բնույթ կրի, այլ պետք է տարվի սիստեմատիկ կերպով: Ակումբների ամբողջ աշխատանքը որգանապես պետք է շաղկապվի հակակրոնական պրոպագանդայի ծավալմանը:

Մասսայական հակակրոնական աշխատանքի բովանդակությունն ընդհանուր քաղաքական հարցերի ուղղությամբ սրված լինելով հանդերձ, միաժամանակ ամենասերտ կերպով պետք է շաղկապվի տվյալ ձեռնարկության ու տվյալ արտադրության առանձնահատկություններին և հագեցված լինի տեղական նյութերով, հաշվի առնելով տեղական և կրոնական առանձնահատկությունները:

Ակմբի մասսայական հակակրոնական աշխատանքը հասարակականորեն-ակտուալ բնույթ պետք է ունենա: Ակումբը մասսաներին պետք է կազմակերպի այս կամ այն հակակրոնական հասարակական գործողության համար, ինչպիսին է, օրինակ, հավատացյալներին դուրս բերել կրոնական համայնքներից, աշխատավորությանը ներգրավել ՄԱՄ-ի շարքերը, պայքարել գործալքումների դեմ կրոնական տոների օրերին և այլն: Բայց այս բոլոր միջոցառումները հիմնված պետք է լինեն լայն բացատրական աշխատանքի վրա,

և վոչ թե կրոնավորների ճնշման միջոցով, վարչական միջոցներ առաջադրելով:

Մատերիալիստական աշխարհայեցողության պրոպագանդան, շնորհիվ այն հետաքրքրության, վորպիսին, տածում են բանվորները բնագիտական հարցերի նկատմամբ, կարևորագույն դեր պետք է խաղա ակմբի հակակրոնական աշխատանքի մեջ: Դրա համար էլ ակումբների հերթական խնդիրներից մեկը պետք է լինի կազմակերպել այդ պրոպագանդան, գործադրելով կուլտ աշխատանքի բոլոր տեսակներն ու ձևերը (դասախոսություններ, զեկուցումներ, խմբակներ, կինո և այլն): Դրա հետ միասին հակակրոնական աշխատանքը պետք է շաղկապել մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության, անտիսեմիտիզմի, շովինիզմի ու նացիոնալիզմի դեմ պայքարելու խնդիրներին և այլն:

2. Մասսայական հակակրոնական աշխատանք կազմակերպելիս անհրաժեշտ է խստորեն հաշվի առնել տվյալ լսարանի կուլտուր-քաղաքական մակարդակը՝ աշխատանքի բովանդակությունն ու ձևերը նրա սեռական, տարիքային և ազգային կազմին հարմարեցնելու նկատառումով. հաշվի առնել նաև այն, թե տվյալ լսարանում ինչքան հավատացյալներ կան: Միաժամանակ ամենաանխնա պայքար պետք է հայտարարել հակակրոնական աշխատանքի վորակը լավացնելու, բանվորական ակտիվի վորակավորումը բարձրացնելու, աշխատանքի ձևերի մեջ բազմազանություն մտցնելու և հակակրոնական վորակավորումից ու պատրաստականությունից զուրկ գաստրոլային դասախոսներին ու եստրադային գործիչներին ակումբներից դուրս վտարելու համար: Ակումբները պարտավոր են ուշի ուշով



ուսումնասիրելու պիեսաների, եստրադային ելույթների և այդ տիպի այլ ձեռնարկումների տեքստերը:

3. Հակակրոնական աշխատանքի համար հաջողությամբ կարելի յե ոգտագործել ակումբային աշխատանքի բոլոր ձևերը— դասախոսություններ, զրույցներ, բարձրաձայն ընթերցանություններ, վիճակախաղեր, վիկտորիաներ, հարց ու պատասխանի յերեկոներ, հակակրոնական խրոնիկա, եքսկուրսիաներ, մասսայական գրոտամոքներ, հակակրոնական կամպանիաներ, անկյուններ, պատի թերթեր, ինքնազարգացման խմբակներ, կինո, կենդանի լրագիր, հակակրոնական դատեր, յերաժշտական յերեկոներ, խաղեր և այլն:

Հակակրոնական պրոպագանդայի համար պետք է ոգտագործել նաև գրադարանային աշխատանքը և շատ ավելի մեծ չափերով, քան այդ արված է մինչև հիմա: Գրադարանները կանոնավոր կերպով պետք է լրացնել հակակրոնական գրականությամբ, իսկ գրադարանները պարտավոր են ծանոթանալ այդ գրականությանը և լայն չափով հասցնել մասսաներին, կազմակերպելով հակակրոնական գրքի յերեկոներ, բարձրաձայն ընթերցանություններ, գեղարվեստական վերապատրաստում և այլն: Յուրաքանչյուր գրադարան պարտավոր է դուրս գրել «Безбожник» թերթը և «Антирелигиозник» ժուռնալը: Միաժամանակ խորհրդակցությունը գտնում է, վոր այս ժուռնալը պետք է լինի ավելի պոպուլյար ու մասսայական, ստորին ակտիվի սպասարկմանը հարմարեցված:

Հատկապես լայն չափով պետք է ոգտագործվեն անհատական և խմբական ագիտացիայի ու պրոպագան-

դայի ձևերը, աշխատանքը դավիթներում, խոհանոցներում, ցեխերում, բնակարաններում, սենյակներում, բարակներում և հանրակացարաններում: Անհատական-խմբական պրոպագանդան լայն չափերով պետք է ընդգրկի հատկապես գյուղի հետ կապված ու դասակարգային հեռամնաց բանվորներին, ընդ վորում առանձին ուշադրություն պետք է դարձնել նոր կադրերի սեզոնիկների, գյուղից յեկած բանվորների և մշտապես գյուղում ապրող կամ նրա հետ կապված բանվորների մեջ կատարվելիք աշխատանքի վրա:

Հակակրոնական պրոպագանդայով պետք է ընդգրկել բանվորուհիներին, բանվորների կանանց, յերիտասարդներին, պիոներներին և դպրոցական տարիքի յերեխաներին, ընդ վորում աշխատանքը պետք է հարմարեցնել այս խմբերից յուրաքանչյուրի առանձնահատկություններին:

Հակակրոնական աշխատանքը հետագայում սիստեմատիկ կերպով բարելավելու նկատառումով ուշի ուշով պետք է ուսումնասիրել մասսայական հակակրոնական պրոպագանդայի փորձը:

4. Յուրաքանչյուր ակումբ իր ձեռնարկության ՄԱՄ-ի բջջի աշխատանքի վայրը պետք է լինի: Այնտեղ, ուր ձեռնարկություններում մարտնչող անաստվածների բջիջներ գոյություն չունեն, ակումբն իր վրա պետ քե վերցնի այդպիսին կազմակերպելու նախաձեռնությունը: ՄԱՄ-ի բջիջը պետք է լինի այնպիսի մի ակտիվ, վորի վրա կարողանա հենվել ակումբը հակակրոնական աշխատանք կատարելիս: Ակմբի վարչությունը պարտավոր է ամեն կերպ աջակցել ՄԱՄ-ի բջիջին, այն է՝ անհրաժեշտ հակակրոնական գրականություն դուրս գրի, շենքով և խմբակների պարապմունք-



ների այլ միջոցներով ապահովի, մասսայական աշխատանքի համար ցուցահանդեսներ և անկյուններ կազմակերպի: Սակայն ՄԱՄ-ի բջջի աշխատանքը վոչ մի դեպքում չպետք է փոխարինի վողջ ակմբի հակակրոնական աշխատանքին: Ակումբը պետք է ունենա հակակրոնական աշխատանքի իր պլանը, վորը պետք է կապված լինի ՄԱՄ-ի բջջի աշխատանքի պլանների հետ: վերջիններիս կատարման ամբողջ պատասխանատվությունը դրվում է ակմբի վրա:

## Ռազմական պրոպագանդան ակմբում

1. Իմպերիալիստական պետությունների կողմից Խ. Միության դեմ պատրաստվող պատերազմի վտանգը, չնայած արտաքին քաղաքականության ասպարեզում մեր ունեցած մի շարք հաջողությունների, շարունակում է մնալ իբրև ռեալ վտանգ պրոլետարական պետության համար: Այդ հանգամանքը պահանջում է, վորպեսզի ԽՍՀՄ-ի աշխատավորությունը, սոցիալիստական շինարարության բուռն տեմպերի ապահովման համար լարված աշխատանք կատարելուն զուգընթաց, անդուլ ուշադրությամբ հետևի և ակտիվ ու անմիջական մասնակցություն ունենա բանվորագյուղացիական կարմիր բանակի և յերկրի պաշտպանության ամրացման գործին:

2. Յերկրի պաշտպանունակության կարևորագույն պայմաններից մեկն է հանդիսանում այն, վոր աշխատավորական լայն մասսաները յուրացնեն ռազմական գիտելիքների և ունակությունների համար սահմանված մինիմումը: Պրոֆմիությունները, վորպես պրոլետարիատի մասսայական կազմակերպություններ, պրոլետարական պետության պաշտպանունակության ամրացման գործի ակտիվ մասնակիցները պետք է լինեն:

Հարկավոր է ճշտորոշ ու դասակարգայնորեն կայուն ձևերով կազմակերպել ռազմական պրոպագանդան, պրոլետարիատի ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկել պատերազմական վտանգի ուղղությամբ:



3. Չնայած ռազմական պրոպագանդան լայն ծավալելու գործի ամբողջ կարեվորությանը, հարկավոր է նշել, վոր պրոֆմիությունները թուլացրել են իրենց ուշադրությունը այս աշխատանքի նկատմամբ, թուլացել է ռազմական պրոպագանդան ակումբներում և կարմիր անկյուններում: Պրոֆմիությունների և Պաշտ-Ավիաքիմի միջև ֆունկցիաների սահմանազատում կատարելու մասին ՀԱՄԿԽ-ի տված դիրեկտիվը պրոֆկազմակերպությունների մեծ մասի կողմից սխալ հասկացվեց. նրանք կարծեցին, թե դրանով ազատվում են ռազմական պրոպագանդայի և պրոլետարիատի ռազմականացման համար պատասխանատու լինելուց, այդ ուղղությամբ աշխատանք կատարելուց:

4. Ակումբը, վորպես պրոֆմիութենական կուլտաշխատանքի կենտրոն, ռազմական պրոպագանդայի կենտրոնական վայրը պետք է հանդիսանա: Սակայն ակումբների աշխատանքում նկատվում են հետևյալ հիմնական թերությունները.

ա) ռազմական պրոպագանդան մասսայական չէ, նա կրում է պատահական, կամպանիոն բնույթ.

բ) ռազմական պրոպագանդայի բովանդակությունը հաճախակի սահմանափակվում է հրաձգային սպորտով.

գ) ռազմական պրոպագանդան չի հարմարեցված և չի շաղկապված ձեռնարկությունների արտադրական առանձնահատկություններին.

դ) բացակայում է փոխադարձ կապը և փորձի փոխանակությունը բանվորական ակումբների և կարմիր բանակային ակումբների միջև.

յե) ակմբային ռազմական ակտիվ ստեղծելու ուղղությամբ աշխատանք չի տարվում։

Ռազմական պրոպագանդան ակումբների վողջ կուլտուրական աշխատանքի անբաժան մասը պետք է կազմի․ Նրա համար Պաշը-Ավիաքիմի կազմակերպությունների հետ համահավասար պատասխանատվություն են կրում նաև ակմբային կազմակերպությունները։

5․ Անհրաժեշտ է ամբողջ վճռականությամբ ձգտել այնպիսի մի դրության, ուր ակմբային աշխատանքի վողջ բովանդակությունը առավելագույն չափով հագեցված լինի ռազմական պրոպագանդայի տարրերով։

Ռազմական պրոպագանդայի հիմնական բովանդակությունը պետք է կազմեն հետևյալ խնդիրները․

ա) Բանվորների և ծառայողների մեջ սիստեմատիկ բացատրական աշխատանք կատարել պատերազմական վտանգի հարցերի շուրջը և պայքարել ռազմական պրոպագանդայի թերագնահատման դեմ․

բ) պարզաբանել այն դերն ու նշանակությունը, վորպիսին ունեն ինդուստրացման ու ժողովրդական տնտեսության վերակառուցումն ու ժողովրդական տնտեսության վերակառուցումը յերկրի պաշտպանունակության ամրացնելու գործում։

գ) Պաշը-Ավիաքիմի հետ միասին բանվոր դասակարգի ռազմա-տեխնիկական պատրաստության ուղղությամբ գործնական աշխատանք ծավալել (ռազմական Թյամբ գործնական աշխատանք ծավալել (ռազմական գիտելիքների մինիմում, ռազմական պատրաստության հիմնական տեսակներ, հրաձգային սպորտ և այլն)։

դ) ուշադրությունը կենտրոնացնել հակագազային ու քիմիական պաշտպանության պրոպագանդան ծավալելու խնդիրների շուրջը․

յե) մասսայականացնել բանվորագյուղացիական



Կարմիր բանակի շինարարության խնդիրները և զարգացնել Կարմիր բանակի մասսայական պրոլետարական շեֆության պրակտիկան։

6․ Նկատի ունենալով այն վիթխարի նշանակությունն ու կարևորությունը, վորպիսին ունի խորհրդային հասարակայնության կարևորագույն ջոկատներից մեկը հանդիսացող և Խորհրդային Միության պաշտպանության ամրացմանն աջակցելու հիմնական խնդիրը հետապնդող Պաշը-Ավիաքիմի գործունեության ծավալումը, անհրաժեշտ է բարձր աստիճանի վրա դնել այդ կազմակերպության իղեաների մասսայականացման գործը, միջոցներ ձեռք առնել աշխատավորությանը լայն չափերով Պաշը-Ավիաքիմի շարքերը ներգրավելու համար, համաձայնեցնել ու շաղկապել տարվող աշխատանքը Պաշը-Ավիաքիմի հետ, հաջող աշխատանքի համար ըստ ամենայնի նպաստավոր մթնոլորտ ստեղծելով։

7․ Ռազմական պրոպագանդայի հաջողությունը վո-րոշող խիստ կարևոր մի մոմենտ է հանդիսանում այդ պրոպագանդայի կիրառման ձևերի ու մեթոդների հարցի գրական լուծումը։ Կենսունակություն, այժմեականություն, գունագեղություն,— ահա մասսայական ռազմական պրոպագանդայի անցկացման անհրաժեշտ պայմանները։ Նրա հիմնական ձևերը կարող են լինել հետևյալները․

ա) բարձրաձայն ընթերցանություններ․

բ) գրույցներ, գործնական զեկուցումներ ու դասախոսություններ, զուգընթացաբար ցուցադրելով դիապոզիտիվներ ու այլ ակնառու պիտույքներ օրվա հրատապ հարցերի վերաբերյալ, ինչպիսին են՝ մեր հարևանների ու իմպերիալիստական պետությունների բանակների նո-

ջրագույն տեխնիկան ու Կարմիր բանակի տեխնիկան (մոտորիզացիա, ավիացիա, քիմիա և այլն), թիկունքի, արդյունաբերական կենտրոնների և յերկաթուղային հանգույցների պաշտպանությունը օդա-քիմիական հարձակումից և այլն.

գ) ռազմական և ռազմա-քաղաքական խաղեր (ռազմա-քաղաքական լոտո, վիկտորինա, հարց ու պատասխաններ կանոնադրությունների շուրջը, կարմիր բանակային լոտո և այլ սեղանային խաղեր).

դ) հարց ու պատասխանի յերեկոներ ռազմական թեմաների շուրջը, վորտեղ իբրև կոնսուլտանտ հրավիրել Կարմիր բանակի ներկայացուցիչներին.

յե) քաղաքացիական կռիվների մասնակիցների հուշերի յերեկոներ, պաշտպանության յերեկոներ, Կարմիր բանակի հետ զոդման յերեկոներ.

զ) պաշտպանության խնդիրներին նվիրված ռադիոզեկուցումների խմբական ունկնդիրներ.

է) ռազմական թեմա ունեցող կինո-սեանսներ, զուգընթացաբար տալով համապատասխան բացատրություններ.

ը) ռազմական գրքի ու ռազմական պլակատների ցուցահանդեսներ, վորտեղ ծանոթացնել զենքի, հակագազերի և այլ պիտույքների հետ.

թ) աշխո-դատեր ռազմական գիտելիքները լավ յուրացրած նախազինակոչիկների և զինակոչիկների նկատմամբ.

ժ) եքսկուրսիաներ դեպի զորանոցը, Կարմիր բանակի ճամբարը, պաշտպանության տները, Պաշը-Ավիաքիմի մուզեյները և այերոդրոմները, նախապատրաստական և հետագա մշակման աշխատանքով.

ժա) ռազմական զբոսանքներ և արշավներ.



ժբ) ընդհանուր կամպանիաների և յերկրի պաշտպանության նվիրված կամպանիաների անցկացում (պաշտպանության շաբաթ, Կարմիր բանակի տարեդարձ, զորակոչ, Ֆիզկուլտուրայի շաբաթ և այլն)՝

Յուրաքանչյուր ակմբում և կարմիր անկյունում պետք է կազմակերպել ռազմական անկյուններ, վորոնք պետք է նայել իբրև ակմբի և կարմիր անկյունների ամբողջ մասսայական ռազմական պրոպագանդայի անցկացման կենտրոններ:

Մասսայական ռազմական պրոպագանդայի անմիջական արդյունքը պետք է լինի այն, վոր միության անդամները մտնեն Պաշը-Ավիաքիմի շարքերը և կանազան ռազմական խմբակները, այնտեղ գործնական ուսուցում անցկացնելու համար պրոլետարական վորակյալ ռեզերվ պատրաստելու, ինչպես նաև արտադրական և ակմբային դիսցիպլինան բարձրացնելու գործին:

Բոլոր ռազմական խմբակները կազմակերպվում են ակմբի միջոցով ու Պաշը-Ավիաքիմի աջակցությամբ և աշխատում են վերջինիս ծրագրերով:

8. Ռազմական պրոպագանդայի խնդրում խոշորագույն դեր պետք է խաղան ընթերցարանները և գրադարանները: Թերթեր ու ժուռնալներ դուրս գրելիս և գրականություն գնելիս անպայման պետք է հաշվի առնել ռազմական պրոպագանդայի շահերի բազմակողմանի ապահովման խնդիրը: Գրադարանները հատկապես պետք է կազմակերպեն առանձին «ռազմական դարակներ» կամ «ռազմական բաժին», անպայման նախատեսելով պահեստի հրամկազմի կարիքների բավարարումը և նրա ռազմական վորակավորման բարձրացումը: Ամենալայն չափով պետք է կիրառել պաշտպանության հարցերին

նվիրված հանձնարարական ցուցակներ, ցուցահանդեսները և կոնսուլտացիաները:

Միաժամանակ ակումբների գրադարան-ընթերցարանները պետք է միջոցներ ձեռք առնեն մասսայականացնելու ռազմական գիրքը, վորի համար պետք է կազմակերպեն ռազմական գրականության ցուցահանդեսներ, գրքադրադրություն, ռազմական գրքի կառնավալներ և յերեկոներ, ռազմական գրականության լավագույն ընթերցողի կոնկուրսներ, գրադարանների աշխատանքին իբրև կոնսուլտանտ մասնակից դարձնեն ռազմական աշխատողների և այլն:

9. Աշխատավորության ռազմական պատրաստության գործում աչքի զարկող տեղ պետք է գրավի հրաձգային սպորտը, վորը վերջերս լայն տարածում է գտել: Առանց, իհարկե, ռազմականացման ու ռազմական պրոպագանդայի վողջ աշխատանքը հրաձգային սպորտով սահմանափակելու, անհրաժեշտ է ակումբների ու կարմիր անկյունների միջոցով լայն մասսայականացնել հրաձգային գործի խնդիրները, աշխատելով հրաձգային խմբակներում ներգրավել վոչ միայն յերիտասարդներին, այլև կանանց ու չափահաս բանվորներին: Պաշը-Ավիաքիմի կազմակերպության հետ միասին ակումբները նախաձեռնողի դերը պետք է ստանձնեն զանազան հրաձգային մրցություններ ու կոնկուրսներ անցկացնելու խնդրում, վորպես հրաձգային սպորտի մասսայականացման միջոցներից մեկն են հանդիսանում: Հրաձգային աշխատանքի համար անհրաժեշտ է նյութական բազա ստեղծել. այդ նպատակով ակումբներին ու կուլտուրայի տներին կից պետք է կազմակերպել հրաձգարաններ, ռազմահրաձգային կաբինետներ, գնել մարտական հրացաններ, փամփուշտներ, հրաձգային սարք, պիտույքներ և այլն:



10. Անհրաժեշտ է առավելագույն հնարավորության սահմաններում ֆիզկուլտուրան մոտեցնել յերկրի պաշտպանության պահանջներին, վերանայելով գոյություն ունեցող ծրագրային դիրքավորումները, այնտեղ մըտցնելով ռազմականացման համապատասխան տարրեր: Ակումբների կարեվորագույն խնդիրներից մեկն է— այդպիսին ձեռք բերել ֆիզկուլտուրնիկներին ներգրավելով Պաշը-Ավիաքիմի ռազմական խմբակները և այն տիպի ռազմական մխավորները: Ֆիզկուլտդեկավարների նոր կադրերի պատրաստման և հների վերապատրաստման գործում նախատեսել նրանց ռազմական պատրաստությունը:

11. Թույլ է ծավալված ռազմական պրոպագանդայի ու ռազմականացման աշխատանքը գյուղում և նրա սոցիալիստական սեկտորում— խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում և մեքենա-տրակտորային կայաններում: Այդ հանգամանքը ինչպես պրոֆկազմակերպությունների, այնպես էլ գյուղի մյուս բոլոր կուլտկրթական կազմակերպությունների առաջ ավյալ աշխատանքի լայն ծավալման խնդիրն է դնում:

Գյուղական ակումբներում, ժողտներում ու խըրճիթ-ընթերցարաններում ռազմական անկյուններ կազմակերպելու և այնտեղ ռազմական աշխատաք ծավալելու հետ միասին, պրոֆկազմակերպությունների քաղաքային ակումբները պետք է դառնան այդ վայրերում կատարվող աշխատանքի ակտիվ հրահանգիչներն ու աջակցողները, վորի համար ակումբները քաղաքային ձեռնարկությունների շեֆությունը պետք է կազմակերպեն գյուղի նկատմամբ, ինչպես նաև գյուղ ուղարկեն հատուկ ֆիզկուլտ-ռազմական բրիգադներ, առանձին հրահանգիչներ և այլն: Վերջիններիս վրա պարտականու-



Պրոֆ-կուլտ-քաղ· աշխ·—4

թյուն է դրվում ունենալ գյուղի պրոֆմիութենական ու Պաշը-Ավիաքիմի կազմակերպությունների ռազմական աշխատանք ծավալելու և այնտեղ ռազմակարգային ճիշտ գիծ անցկացնելու գործում:

Գյուղում ռազմական աշխատանքի հիմնական ցուցադրական կենտրոնները պետք է հանդիսանան կոլտնտեսությունները, խորհտնտեսությունները և մեքենատրակտորային կայանները՝

12. Ակումբների միջոցով ռազմական պրոպագանդայի կազմակերպումն ըստ ամենայնի լրիվ ապահովելու նկատառումով չափազանց կարևոր է Պաշը-Ավիաքիմի բջիջների ակտիվից ակմբային ռազմական ամուր ակտիվ ստեղծել (պահեստի հրամկազմից, արձակուրդավոր Կարմիր բանակայիններից և այլն). Պաշը-Ավիաքիմի ակտիվի կադրերը պետք է դառնան ակումբի միջոցով ռազմական պրոպագանդայի ուղղությամբ կիրառվող բոլոր ձեռնարկումների նախաձեռնողները, մասսայական միջոցառումների կիրառման կազմակերպիչներն ու կոնսուլտանտները: Միաժամանակ պետք է աշխատել, վոր ակումբների հաստիքային աշխատողները և ակտիվը ռազմական պրոպագանդայի կազմակերպման համար համապատասխան վարկավորում ձեռք բերել, վորի համար առաջիկա կիսամյակում Պաշը-Ավիաքիմի միջմիութենական կազմակերպությունները ակումբներում պետք է անցկացնեն ռազմական պրոպագանդայի հարցեր ուսումնասիրող կուրս-կոնֆերանսներ և ըստ հնարավորության նրանցով անցկացնել վողջ ակմբային ակտիվը: Անհրաժեշտ է հետևողականորեն ձգտել ակումբների աշխատանքին մասնակից դարձնելու բանվորագյուղացիական Կարմիր բանակի զորամասերի հրամկազմին և ակտիվ բանակայիններին, ուսումնասիրել



ռազմական ակումբների աշխատանքի դրվածքը, լենինյան անկյունները և այլն:

13. Ակումբների և Կարմիր անկյունների ռազմական պրոպագանդայի գործը սիստեմատիկ ղեկավարությամբ ապահովելու, այդ աշխատանքի ուղղությամբ ուշադրությունը սրելու և լայն ինքնաքննադատությամբ թերությունները վերացնելու նկատառումներով անհրաժեշտ է՝

ա) Բոլոր ակմբային ժուռնալներում կանոնավոր կերպով տալ ղեկավար նյութեր և ռազմական պրոպագանդայի անցկացման գործում ակումբների ու կարմիր անկյունների միջև փորձի փոխանակում կազմակերպել:

բ) վողջ պրոֆմիութենական մամուլում ըստ հնարավորության լրիվ ու գործնականորեն լուսաբանել ռազմական պրոպագանդայի հարցերը:

գ) ձեռնարկությունների բոլոր պատի ու տպագիր թերթերում ունենալ պաշտպանության հատուկ բաժիններ կամ անկյուններ.

դ) մամուլի վողջ ցանցում ակումբների ռազմական պրոպագանդայի աշխատանքների ստուգատես անցկացնել.

ե) ակումբների ռազմական պրոպագանդայի հարցերի լուսաբանումը պատշաճ բարձրության վրա դնելու նկատառումով՝ կազմակերպել բանթղթակիցների գործնական ու կանոնավոր հրահանգավորում:

14. Ռազմական պրոպագանդայի ուղղությամբ ակումբների և կարմիր անկյունների կողմից կատարվող ամբողջ աշխատանքը պետք է դնել սոցմրցման հիմունքների վրա՝ Ամենալայն չափով պետք է գործադրել լավագույն աշխատանքի, էքսկուրսիայի, չերեկույթի, ավագույն ձևերի լավագույն կազմակերպման մրցաշավի և այլ

թյունը ակումբների, կարմիր անկյունների, ռազմական անկյունների, և առանձին խմբակների միջև: Հարկավոր է նաև Պաշը-Ավիաքիմի հետ միասին գործադրել հարվածային ռազմական խմբակներ կազմակերպելու ձևը:

15. Նյութական բազայի հարցերը վճռական նշանակություն ունեն ռազմական պրոպագանդայի ու ռազմական ուսուցման հաջող ծավալման գործում: Նվազագույն հաջողությունն ապահովելու համար պահանջվում է.

ա) Հաստատուն հիմունքների վրա դնել ֆիզկուլտուրայի, հրաձգային սպորտի ու ռազմական պրոպագանդայի համար տրվող 11 տոկոսային ծախքերը, հատկացնելով ռազմական պրոպագանդային (առանց հրաձգային սպորտի) վոչ պակաս, քան 4 տոկոս.

բ) Նախատեսել միջմիութենական միավորների կողմից կամավոր նվիրատվությունների միջոցով հավաքվող գումարների մի մասը առանձնացնելու ռազմական աշխատանքի այնպիսի խոշոր միջոցառումների գործադրման համար, վորոնք ընդգրկում են վողջ պրոֆմիության անդամներին քաղաքային կամ շրջանային մասշտաբով (հրաձգարանների ու գազապաստարանների կառուցում, ճամբարների, արշավների, ռազմական երեկույթների կազմակերպում և այլն).

գ) Լիովին ապահովել ռազմական անկյունների, խմբակների և շարային միավորների աշխատանքը համապատասխան մշակման շենքերով, վորտեղ սահմանել ակմբային ընդհանուր որացուցային պլանի մեջ մտնող պարապմունքային հաստատուն ժամեր (վոչ պակաս, քան 9 կամ 10 որում մեկ անգամ):

16. Ռազմական պրոպագանդայի ուղղությամբ մի-



ասնական աշխատանք կատարելու ասպարեզում ակումբների և կարմիր անկյունների աշխատանքը պլանային կարգով Պաշը-Ավիաքիմի հետ շաղկապելու նկատառումով անհրաժեշտ է, վորպեսզի ակմբային պլանի կազմությանը մասնակցեն Պաշը-Ավիաքիմի բջիջների ղեկավար աշխատողները: Պետք է նաև աշխատել, վորպեսզի ակմբի և Պաշը-Ավիաքիմի կազմակերպությունների ղեկավար մարմինները փոխադարձ ներկայացուցչական սիստեմ սահմանեն:

## Կուլտխորհուրդների կազմակերպման հիմնական սկզբունքները

1. Տվյալ շրջանի մասշտաբով քաղկրթական և կուլտուրական աշխատանք կատարող բոլոր կազմակերպությունների գործունեությունը միավորելու ու համաձայնեցնելու, ինչպես նաև ուժերի ու միջոցների ջլատման և քաղկրթական ու կուլտուրական աշխատանքի հաջող ծավալումը կազմալուծող աններդաշնակության տարրերի դեմ պայքարելու նկատառումներով անհրաժեշտ համարել՝ կուլտաշխատանք կատարող բոլոր մարմինների գործունեությունը համակարգող միասնական պլան ստեղծել և պրոլետարական պետության որգանները հանդիսացող լուսբաժիններին կից կուլտուրական խորհուրդներ կազմակերպել:

2. Միասնական պլան կազմելու և այն կիրառելու պատասխանատվությունը դրվում է շրջանային կուլտխորհրդի վրա. վորը կազմվում է տվյալ շրջանում կուլտաշխատանք կատարող բոլոր կազմակերպությունների և շրջանի պրոլետարական հասարակայնության ներկայացուցիչներից:

3. Կուլտուրական շինարարության շրջանային խոր-

հուրդն իր աշխատանքը կառուցում է միասնական օպերատիվ պլանի հիման վրա և վորոշ կենտրոնացված միջոցառումներ կիրառելու ասպարեզում համախմբում է ուժերն ու միջոցները: Շրջանային միասնական պլանը կազմվում է առանձին կուլտկազմակերպությունների պլանների հիման վրա և կիրառվում է նրանց միջև աշխատանքի ու պարտականությունների ճիշտ բաշխում կատարելով:

Խորհուրդն իր վողջ աշխատանքում հենակետ է ընդունում կուլտուրական հեղափոխության առանձին խնդիրների շուրջը համախմբված ակտիվի լայն ներգրավումը:

4. Միասնական պլանի սահմաններում կուլտաշխատանք կատարող բոլոր կազմակերպությունները պահպանում են իրենց օպերատիվ-կազմակերպչական ինքնուրույնությունը և իրենց աշխատանքը վարում են տվյալ կազմակերպության բնույթին ու խնդիրներին հատուկ պայմանագրերի հիման վրա:

5. Տվյալ շրջանի տերիտորիայում գտնվող կուլտուրայի տները ղեկավարվում են շրջանային կուլտխորհրդի կողմից:

6. Ձեռնարկություններում ստեղծվում է կուլտխորհուրդ, վորն ղեկավարում է գործարկոմը և վորը կազմվում է— ա) ցեխերի կուլտկազմակերպիչներից, բ) տվյալ ձեռնարկությանն սպասարկող բոլոր կուլտուր-կենցաղային հիմնարկների ներկայացուցիչներից, գ) տվյալ ձեռնարկությունում բջիջներ ունեցող բոլոր կամավոր ընկերությունների ներկայացուցիչներից և դ) կուլտուր-կենցաղային հանձնաժողովների ու ՃՏՍ-ների ներկայացուցիչներից:

7. Ձեռնարկության կուլտխորհուրդը հանդիսա-



նում է իբրև օպերատիվ ղեկավարչական մի մարմին և սպասարկում է բանվորությանը վոչ միայն գործարանում և ակմբում, այլև բնակության վայրում:

Ձեռնարկություններում կուլտխորհրդի ղեկավարն է գործարկոմի կուլտկազմակերպիչը: Ընթացիկ օպերատիվ աշխատանքի համար խորհուրդն առանձնացնում է 5–9 հոգուց բաղկացած բյուրո: Խորհրդի բյուրոն նշանակում է աշխատանքի առանձին բնագավառների կազմակերպիչներ: կազմակերպիչն իր աշխատանքում հենվում է բանվորական կամավոր կուլտակտիվի վրա:

9. Նկատի ունենալով այն, վոր տվյալ էտապում կուլտուրական հեղափոխության հիմնական խնդիրները կարող են լուծվել բանվորական մասսային առավելագույն չափով ներգրավելով կուլտաշխատանքի առանձին տեսակներին մասնակցելու գործում, գտնել, վոր ակմբային անդամության այն ձևը, վորն ընդգրկվում է (այն էլ ձևականորեն) բանվորական մասսայի միայն մեկ մասին, արդեն հնացած է և պետք է փոխարինվի պրոլետարական մասսաների ակտիվությամբ և ինքնագործունեությամբ, վորոնք պետք է դրսևվորեն կամավորության սկզբունքով և կուլտաշխատանքի առանձին տեսակների շուրջը բրիգադներ ստեղծելով:

10. Գործարանային ակմբի ղեկավարությունն ընկնում է գործարանային կուլտխորհրդի վրա, վորը ակումբը պետք է օգտագործի իբրև հիմնական բազա բոլոր այն մասսայական ձեռնարկումների համար, վորոնք անցեն կացվում թե՛ ձեռնարկությունում և թե՛ հանրակացարաններում: Ակմբի գործառնական ղեկավարությունն իրագործելու համար կուլտկրթական խորհուրդն իր կողմից ակմբային կազմակերպիչ է նշանակում:

11. Միջմիութենական և շրջանային ակումբների

առընթեր ստեղծվում են կուլտխորհուրդներ, բաղկացած ձեռնարկությունների կուլտխորհուրդների կողմից նշանակված ներկայացուցիչներից և ակմբի շուրջը համախմբված կազմակերպությունների ներկայացուցիչներից։

Միջմիութենական և շրջանային ակումբների կուլտխորհուրդների ղեկավարությունը դրվում է միջմիութենական կամ միութենական կազմակերպությունների վրա։

12. Ազգային ակումբների անդամության հարցը լուծվում է այնպես, ինչպես մյուս բոլոր միութենական ակումբներում։

13. Այն ձեռնարկություններում և այն շրջաններում, վորտեղ ազգային փոքրամասնություններին պատկանող բանվորների հոծ խմբեր կան, կուլտխորհուրդը ազգային փոքրամասնությունների մեջ աշխատանք կատարելու համար հատուկ կազմակերպիչ է նշանակում։

14. Կուլտխորհրդի յերիտսեկցիան պետք է դառնա ձեռնարկությունների յերիտասարդության մեջ կուլտաշխատանք կատարելու հիմնական ձևերից մեկը։

Յերիտսեկցիաները նշանակում են առանձին կազմակերպիչներ՝ յերիտասարդության մեջ ըստ առանձին բնագավառների կուլտաշխատանք կատարելու համար։

15. Կուլտաշխատանքի վերակառուցման նկատմամբ հասարակական վերահսկողությունն ուժեղացնելու համար կազմակերպվում են ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ, վորոնք պարբերաբար ստուգում են կուլտուրական վերակառուցման բոլոր տեսակները և ընդհանրապես կուլտշինարարությունը։

16. Կուլտուրական շինարարության միասնական պլանները և կուլտաշխատանքի առանձին կարևորագույն հարցերի ուղղությամբ կատարված աշխատանքի



հաշվետվությունները քննարկում են բանվորական լայն ժողովներում և կոնֆերանսներում։

17. Խորհրդակցությունն անհրաժեշտ է համարում ուշի ուշով ուսումնասիրել քաղկրթական ու կուլտուրական աշխատանքի նոր կառուցվածքի փորձը և ամփոփել դրա արդյունքները վոչ ուշ, քան մեկ տարուց։

18. Անհրաժեշտ համարել՝ բանվորական թաղամասերում և ավաններում աշխատելու համար ստեղծել կուլտաշխատողների համապատասխան (թաղամասի, ավանի) խմբեր։

19. Շրջկուլտխորհուրդներին առընթեր ստեղծվում են միջգերատեսչական մեթոդական բաժիններ։

20. Անհրաժեշտ համարել՝ ակումբներին և կուլտուրայի տներին առընթեր կազմակերպել ակտիվի պատրաստման սեմինարներ ու խմբակներ և քաղկրթական ու կուլտուրական աշխատանք տանել։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Եջ

1. Առաջաբանի փոխարեն . . . . . . . . . 3
2. Կուլտուր-քաղաքական աշխատանքը ձեռնարկություններում և շինվայրերում . . . . . . . . . 8
3. ա) Ձեռնարկությունների կուլտ-քաղխորհուրդների խնդիրները տեխնիկայի տիրապետման ասպարեզում . . . . . . . . . . . 32
   բ) Կուլտ-խորհրդակցության վորոշումը շինվայրերի կուլտ-քաղմասսայական աշխատանքի դրության ու նրա հետագա խնդիրների մասին . . . 41
4. Ինտերնացիոնալ դաստիարակության, հակակրոնական աշխատանքների և ռազմական պրոպագանդայի հիմնական խնդիրները . . . . . . . . . . 49
   ա) Բանվորական ակումբը և ինտերնացիոնալ դաստիարակությունը . . . . . . . . . 51
   բ) Հակակրոնական աշխատանքը ակումբում . . 64
   գ) Ռազմական պրոպագանդան ակումբում . . . 74
   դ) Կուլտխորհուրդների կազմակերպման հիմն. սկզբունքները . . . . . . . . . 85



ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. Մ. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ՀՀ Ազգային գրադարան
NL0192938

ԳԻՆԸ 15 ԿՈՊ. (4 մ.)

464.106

ОЧЕРЕДНЫЕ ЗАДАЧИ КУЛЬТУРНО-ПОЛИТИЧЕСКИХ РАБОТ ПРОФСОЮЗОВ

Госиздат ССР Армении

Эривань—1931